


ԲԱԺՆԵԳԻՆ
 Պուլկարիա
 Տարեկ. 10 ֆր
 Վեցամս. 5 "
 Արտասահման
 Տարեկ. 12 ֆր
 Վեցամս. 6 "
 Ամերիկա
 2 Տոլ. 30 սենդ
 ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՅՄԱՆԵ
 Վրո թիւեր եւ
 չին տրուիր:
 Հասցե
 DIRAN
 PAPA ZIAN
 YILDIZ TABIA
 VARNA
 BULGARIE

ՀԱՐԱԹԱՅԱՆԴԷՍ ՍԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՍՆ

Դ. ՏԱՐԻ

ՍԵՊՏ. 30 ՀԱՐԱԹ 1900

ԹԻԻ 181

ԱԶԴ

Ամերիկայի համար «Հայելի» բաժնեգրին է 12 ֆրանք կամ 2 տոյար 30 սենդ: Բաժնեգրին պետք է ղրկել համար մեկ օրստով և համար Պանգ Նասիօնայ Պուլկարի, Վառնա քաղաք, մեր հասցեն ուղեալ Ամերիկայի Էֆրէս և Գոմբասի փոխանակարով:

«ԵՍ ԻՆՉ ԿՐՆԱՍ ԸՆԵԼ»

Տասնմեթերորդ դարուն սկիզբները՝ օր մը երբ Այնուրդի սեպ ժայռերուն վրայ Ռուս և Յեյն կղերները ընկերային հաւաքումի մը մէջ կը պարծենային իրենց ազգային ու եկեղեցական անցեալին վրայ ու անոնց պատմական մանրամասնութիւնները մեծ հպարտութեամբ կը յիշատակէին, անդին՝ հէգ Պուլկար ազգին պատկանող Օթէց Բայիսի սարկաւադը՝ մասնաւորապէս յոյն կղերին ծաղրանքին կ'ենթարկուէր ու անոր հեգնական քաջքոյրներուն ի պատասխան անկիւն մը կ'ընկուած արին արցունք կը թափէր, վասն զի իր տաքաբաղդ ազգը կորուսած էր պատմութիւնը և իր լեզուն և յոյն կղերին չարամիտ ծաղրանքը անոր վէրքին կը զարնէր շեշտաւի:

Օթէց Բայիսի հակառակ իր առած միտաւորական դաստիարակութեան, այն ըմբոստ մըտքերէն էր, որ չափէ գուրս բարեհամբոյր ըլլալով հանդերձ, երբեք չէր կրնար հանդուրժել ազգային արժանապատուութեան վիրաւորանքին և կը բղկտէր ամեն ինչ, որ եկեղեցական նուիրապետութեան անունով կապանքներ դ'ելու կը յկրտէր անոր հայրենասիրական բուն ձգտում:

Ներուն: Ուստի ուս և յոյն կղերներուն նենգամիտ ծաղրանքը հիմնապէս ցնցեց անոր ըմբոստ միտքը և զանի վարեց Այնուրդի ժայռերէն վար, այնպիսի տեղեր ուր իր ընդմաշաբար ազը ապրեր էր դարերով և թողուցեր պատմական յիշատակներու կենսական բեկորներ, հակառակ անոր ջնշումին համար մղուած դարեւոր կռիւին, կուլ մը՝ ուր Բիւզանդեան կայսրութիւնը՝ ամեն հի թափով մը ինկած էր իրմէ շատ պզտիկ ազգի մը վրայ ու անոր պատմութիւնն ու լեզուն բնաջինջ ընելու կատաղի մարմալէն լուսնոտած:

Այն ատեն Պուլկար քաղաքացին մուցած էր իր մայրենի լեզուն, ամօթ կըգար այն գեղջուկ լեզուով խօսելու, տիրող լեզուն յունարէնն էր, միայն պուլկար գիւղացին էր, որ պահած ու պահպանած էր իր լեզուն հետ նաև ինչ ինչ սոհմային սովորութիւններ, որոց մէջ կը ցոլային զօրեղապէս՝ զաւկէ զաւակ խնամով յանձնուած Պուլկար ազգը բնորոշող խել մը ազգային առանձնայատկութիւններ:

Օթէց Բայիսի գործն եղաւ՝ ուրեմն, մտնել է՛ն սուալ գիւղացիներուն մէջ և հետզհետէ կազմել ու վերաշինել Պուլկար լեզուն, որ ինչպէս ըսինք, շատոնց կորուսած էր իր քերականական ու գրական կոնոնները և դարձած տեսակ մը արեւմտեան քրդերէնի, ու արդարև յաջողեցաւ ան քրիք քրիք տարտղնած լեզուական կմախքին վերջնական կազմաւորումովը, ապահովել ազգին վերածնութեան է՛ն առաջին լծակին գոյութիւնը:

Լեզուէն յետոյ, պատմութիւնը՝ որ հաւատաքնականէն աւելի Բիւզանդեան սոսկալի խորոյներու զոհ գացած էր, Օթէց Բայիսի հոգածութեան գլխաւոր առարկան դարձաւ: Սարէն ու ձորէն, հովտէն ու դաշտէն՝ անգին մարգարիտներ ժողովելէ աւելի ծակաչքութեամբ հաւաքեց բոլոր թղթի կտորներն ու սուանդութիւն:

ները, որոնք կրնային լոյս սփռել հեռի կամ մօտաւոր անցեալ դէպքերու վրայ և «Պատմութիւն» ըստած հոյակապ շէնքին կառուցման ծառայել իսկապէս: Ան քաղց ու չափեց ոչ միայն իր հայրենի երկիրը, այլ և դրացի երկիրներու մեծածառաւ տարածութիւններն ալ, մինչև որ Գէլթայի և Վիէննայի մատենադարաններէն յաջողեցու գտնել պէտք եղած ատաղձը իր որբացած աղգին անցնալին յիշակերտը կանգնելու համար: Ու արդարեւ կանգնեց:

Եւ այսպէս Պուլկար ազգը օժտուեցաւ լեզուով ու պատմութիւնով և այն օրէն սկսեց ազգային լինքնաճանաչութեան դարագլուխը՝ որ ատիճանական յառաջդիմութեամբ երկու դարու մշտարժարժ ու անվերջ կռիւներէ յետոյ տուաւ Պալքանի այս արժանաւոր ցեղին ազատութեան պաշտելի դրօշը, որով այսօր կը պարծենայ ան և իրաւամբ սա կրակոտ խօսքը կը նետէ Յոյն կղերին ճակատին. «Ահաւասիկ լեզուս և պատմութիւնս»:

Օթէց Բայիսիի այս չքնաղ մեծագործութիւնը՝ որ բոլորովին անհատական ուժով ու շանքով բեղմնաւորած է, ջախջախիչ պատասխանն է մեր ազգային կեանքին մէջ տեսնուած տխուր երեւոյթի մը, որին վրայ կը ծանրանանք յաջորդով, ի մասնաւորի ցոյց տալով արժէքը այն ապուշ ու փախստական ֆռաղին, զոր մանաւանդ հայ լայֆն ու կղերը ամեն օր կը նետեն մեր առջեւ:

«Ես ի՞նչ կրնամ ընել»:

ԾԱՆՕԹ

ԱԶԳԱՅԻՆ

Այս տարի Արմաշ ուխտագնացութիւն ընող երկսեռ ազգայնոց թիւը 8000ը անցեր և այս պատճառաւ վանքին հասոյթ եղեր է 660 օսմ. ոսկի:

— Պուրէշի մէջ Աղքատախնամ մարմին մը կազմուեր է, հիւանդ, կարօտ և աղքատ թեմականները խնամելու համար:

(Կը լսենք թէ Վառնայի մէջ ալ նմանօրինակ մարմին մը պիտի կազմուի... ձմեռը տնցնելէն վերջը):

— «Թիֆլիսի Վէստնիք» լրագիրը կը գրէ թէ Ս. Հեղինէ կղզին բանտարկուած պատերազմական գերի Պօէրներուն մէջ կը գտնուի նաև ռուսիացի կամաւոր մը, իշխան Բագրատիոն Մուխ-

րանսքի, որ հայկական ծագումով (Բագրատունի) Վրացի մ'է, իշխան Բագրատիոն Ս. Հեղինէ կղզիէն ապրիլ 5 թուականով քարթ մը զրկեր է յիշեալ լրագրին որուն կիմացունէ թէ ինք Ձերանսացի Վիլպուս. Մարէօյ գնդապետի շնորհիւ մէջ կը գտնուէր. անոր մահէն ետքը գերի բռնուելով Ս. Հեղինէ կղզին տարուեցաւ բանտարկուեցաւ: Թղթատարական քարթին վրայ փոստային կնիքներէն զատ դրոշմուած էր նաեւ անգլիերէն սա վերտառութիւնը.

(Պատերազմական գերիներու գրաքննութիւն):

ՊԱՐՍԻՑ ԾԱՀԸ Ի ՍՕՖԻԱ

Պարսից Մուղաֆֆէրէտտին Շահը որ Արուեստանդէսէ վերադարձին Կ. Պոլիս այցելած էր, անցեալ ուրբաթ օր մասնաւոր կառախումբով հասեր է Սօֆիայի կայարանը, ուր Ն. Արքայական Բարձրութիւն Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանը շրջապատեալ քաղաքային և զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներէ, Պարսից վեհապետին բարի գալուստ մաղթելէ վերջը՝ անոր հետ փառաւոր կառք մը նստած՝ իշխանական ապարանքը գացեր են: Շահին հետևորդներն ալ կառքերով ուղեկցեր են անոնց: Բովանդակ ճամբուն վրայ Պուլկար զօրաց ջոկատներ ողջոյններ ընծայեր և ժողովուրդն ալ ծափահարեր է: Մէկ ժամ վերջը Մուղաֆֆէրէտտին Շահը և Պուլկարիոյ իշխանը իրենց հաւեւորդներուն հետ թնթանութաձիգ զօրաց ռազմափորձերը գիտելու գացեր են: Նոյն գիշերը փառաւոր կոչունք մը տըրուեր է իշխանական ապարանքին մէջ ու լուսավառութիւն և հրախաղութիւնք կատարուեր են:

Ն. Ա. Բարձրութիւն Պուլկարիոյ իշխանը Ս. Անտրէասի ականակուռ պատուանշանը տուեր է Պարսից վեհապետին, որ Շաբաթ օրը ժամը 10ին Սօֆիայէն մեկնել է Պէլկրատի ճամբով դէպի Բեշարսպուրկ:

(Մուղաֆֆէրէտտին Շահին կենսագրական ու կենդանագիրը յաջորդ թերթով պիտի հրատարակենք):

Ա. Զարպհանէլեանի Հայկական գրատունը փոխադրուած է նոյն փողոցին վերի գլուխը, աւելի ճոխ և բազմատեսակ մթերքներով:

ՀԱՅԵԼԻ ԱՏԵԱՆ ՄԸ

ՖԻԼԻՊԻ ՄԷՁ

Աւերակի լոյս, պարոն դատաւորներ, այլ ևս Պուլ-կաթնաւ հայերը իրենց անվերջանալի խնդիրներով ու կոխերով չը պիտի ձանձրացնեն ձեզի: Դժգոհակա՞ն կամ «պատույ ատեաններով պիտի կարգադրեն իրենց վեճերը»: Բու ալ աչքդ լոյս Պ. Արփիար, բու և բու-կիներուդ պատույ ատեանն աղաղակները որ մեր ականջ-ները խցունելու չափ զօրաւոր էին, իրենց ներգոր-ծութիւնը կունենան: պատույ և ընկերական ատեան-ներու սովորութիւնը սկսանք ընդհանրացնել մեր մէջ: Ծրարը ֆիլիպէէն քակուեցաւ: Հիմա՝ Նշան Տումանեան անուն անձի մը երեք Դաշնակցական Ֆեթայիներու կող-մէ կրած յարձակումին պատճառաւ կաշմուած ընկերա-կան ատեանին ականջ տանք:

Անցեալ շաբաթ գիշեր ժամը 9ին, Նոյն երեք հե-րոսները օգտուելով բօլիսի բացակայութենէն, ծխաւա-ճառ ոչ-դաշնակցական Նշան Տումանեանի խանութը կը մտնեն, երբ յիշեալը մտազբաղ իր օրուան առուժախին հաշիւը կընէր, ու անոր վրայ յարձակելով կ'ուզեն խա-նութը տակնուվրայ ընել, որովհետեւ իրենց կուսակցու-թեան հակակարծիք գտնուելու մեծ ոճիրը գործած է եղեր: Տումանեան յանկարծակիի եկած կը սկսի պողալ կանչել: Ֆեթայիին մէկը Տումանեանին վիզը կը փաթ-թօրի, այդ խառնաշփոթութեան մէջ բռնի մը ապակի-ներ ու խել մը շիշեր կը կոտորին, բօլիսը կը հասնի ու յարձակող երեք պարոնները բանտ կ'առանձնորդէ:

Հետեւեալ առաւօտ տեղւոյս Դաշնակցական պա-րոնները գործի վրայ էին: Պրն Զօրեանց իր հետն ու-նենալով կոմիտէի գանձապետը, Տումանեանին խանութը կերթայ, խնդիրը բնկելու, խոստանալով պատժել: Եւ յա-ջաւորները: Տումանեան խնդիրը պատմելէ վերջը կի-մացնէ նաև թէ պիտի բողոքէ կառավարութեան: Պրն Զօրեանց թէ յանդաւորները պատժելու և թէ եղած վնասը սնտուկէն վճարելու պատրաստակամութիւնը կը յայտնէ, պայմանաւ: որ ետ կենայ կառավարութեան բողոքելու մտադրութենէն: Տումանեան կը համոզուի և հետեւեալ գիշեր ընկերական ատեան մը կը կազմուի ուր կը հրաւիրուին Տ. Բ. Բազարճըզեան, Վ. Շահրիման, Տ. Տումանեան (մեծ եղբայրը Ն. Տումանեանին) և ուրիշներ:

Յետ երկար մանրակրկիտ բնութեան, կը հաս-տատուի վայրենաբար յարձակողներու յանցապարտու-թիւնը և հետեւեալ օրը Նշան Տումանեանի ըրած վնա-սին փոխարէնը կը վճարուի սնտուկէն: (Բոժ. — Ո՞ր սըն-տուկէն: Կոյկոյճիներու յատուկ խաղա-պէրս սան-ճրխի՞ ալ ունին ատոնք, թէ ոչ՝ բարի նպատակի անու-նով հաւաքուած գրաւներու սնտուկէն...):

Ի՞նչ վիճակ է այս. ո՞ւր կը տանին մեզի մեր այս բայրերը. դէպի լուսաւորութիւն, դէպի ազատամտու-թիւն... (Բոժ. — Ասանկ երթայ նէ՛ շիտակ Եւտի գուլէի ազգ. Հիւանդանոցը պիտի տանին)

ԿՈՉՆԱԿ

ՀԱՒԱՏԱՑԷՔ

— 206 —

Հաւատացէ՛ք թէ քահանաներուն մէջ կան անանկներ որ կարգացածնին չեն հասկնար:

Հաւատացէ՛ք թէ Պուլկարահայ հոգաբար-ձուններուն մէջ հոգաբարձու քիչ կը գտնուի:

Հաւատացէ՛ք թէ վարժաբանաց բարեկար-գութեան խնդիրը տակաւին շատ ատեններ պի-տի ծեծուի մասնաւոր սխսոր կողմերու մէջ... Զուրի պէս:

Հաւատացէ՛ք թէ եկեղեցւոյ պահարաններու մէջ կեցող օրիորդք՝ դասին ետեւը կեցող պա-րոններուն հետ աչքով ու ընքուիով կը խօսին:

Հաւատացէ՛ք թէ ամեն բարի ձիրքերով օժ-տուած՝ բայց աժան կարապետ իշի վարժապետ չի գտնուիր:

Հաւատացէ՛ք թէ ամեն երկար մազ կրող ու արթիւթ եմ ըսողներուն գանկին մէջ ուղեղի տեղ խօզալալ կը գտնուի:

Հաւատացէ՛ք թէ այս կամ այն թեթեւոյի-կին հետ «պաշտել» բայը խոնարհող օրիորդներ վերջ ի վերջոյ տունը կը մնան:

Հաւատացէ՛ք թէ հասնիքի մը ներկայ գա-նուելու համար դերձակէն 2 ֆր. փրայով հա-գուստ առնող թեթեւախոններ կան:

Հաւատացէ՛ք թէ գիշեր ատեն պսակի առ-թիւ եկեղեցին հաւաքուող օրիորդներուն մէջ կամիթ ուտողներ շատ կան:

Հաւատացէ՛ք թէ շատ դժուարին է պէյնա-մազ մարդուն խօսք հասկցնելը:

Վերջապէս հաւատացէ՛ք թէ մէկը չի կրնար այս բոլոր ըսածներուս հակառակը ապացուցա-նել:

ՋՈՒԹԱԿ

Ծ Ի Ծ Ա Ղ

Բարիդի ազգայիներէն մին վերջերս կը հարցնէ «Լ'Առմէնի» խմբագրին թէ ինչո՞ւ Պօետ-ները սկսած են յաղթուիլ Անկլիացիներէն:

— Պօետներն վեր գործի ձեռնարկած ըլլալ-նուն համար, կը պատասխանէ Տիար Զերազ:



Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՉԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԻՍԻՆ ՄԷՉ

11

Ռուսական Տաղարարը որ հիանալի շէնք մըն է կը պարունակէ Վասիլի Վէրէսչակ ուսումնական գեղարուեստագէտին կարգ մը պատկերները, որք սքանչելի կերպով կը պատկերացրնեն նաբոլէոն Ա.ի արշաւանքն ի Ռուսիա 1812ին: Վասիլիի հաւաքածոն կը բաղկանայ 16 պատկերներէ, որոց իւրաքանչիւրն իր մասնաւոր շահեկանութիւնն ունի, և կը վերաբերի դէպքի մը որ կատարուեցաւ Մոսկէի մէջ Մոսկուա արշաւանքին և վերադարձին տոնն: Ամենէն շահագրգիռ երեք տեսարաններն են 3, 5 և 9 թիւերը: Թիւ 3 կը ներկայացնէ զնաբոլէոն Մոսկուայի առջև: Հագած է իր թխագլխի բաճկոնակը, և ամենէն հեռաւոր բլուրին վրայ կեցած կը դիտէ, փոշիի ամպով մը շրջապատուած, և արդէն իսկ անհանգիստ է՝ քաղաքը տեսնելով առանց լոյսի և իր բնակիչներէն ամայի: Հակառակ իր պահակաշօրաց ծափերուն, յուսախարի դէմք մը առած է: Թիւ 5 կը ներկայացնէ Կայսրըն ի Քրէմլին ընկերակցութեամբ մտնելու Մոսկէի, և բերդին ձերպերէն կը դիտէ այն սուկալի և ահագին կրակը՝ որ մոխիր դարձուց Մոսկուա քաղաքը: Աշխարհակալին դէմքին արտայայտութիւնը կատարելապէս կը ցոլացնէ Քրէմլինի միւս կողմը կատարուած այս սրտաշարժ տըռամին իրեն վրայ ըրած տպաւորութիւնը: Թիւ 9 կը ցոլցնէ Կայսեր գիշերանց փախուստը կամ վերադարձը. իրեն կը հետևի իր սպայակոյտ, իսկ առջեւէն կերթան վեց վիշապաշօրքեր խոշոր ջահեր բռնած, որոնցմով կառաջնորդեն ըզնաբոլէոն դէպի Բէդրովսքի պալատ, Կայսրը սև և ծխաշունչ աւերակի մը վրայ կեցած, վիշտերու տակ ընկճուած, կորոշէ նահանջել մտնել շալներուն հետ խորհրդակցելէ ետք: Հագած է իր կանաչ թաւիշէ մուշտակը, վիզն ալ կտոր մը մուշտակ փաթթած, գլուխն ալ գրած մինչև ականջները ծածկող գլխարկը, Կան նաև երկու պատկերներ, որք շատ աչքի կը զարնեն, մին կը ներկայացնէ զնաբոլէոն Որսորդ շինուորաց դնդապետի համազգեստով, իր ձեռքն անցուցած սպիտակ քաղմիրէ բաճկոնակին, միւսին մէջ Կայսրն հագած է իր Լէհաստանցիի մուշտակը, գլուխը դրած թաղիքէ գլխարկը, և խոշոր մօրուքով: Կարծես Վասիլի բուն տիպարէն առած է իր պատկերները, այնքան հաւատարմաբար կը ներկայացնեն զնաբոլէոն, ինչպէս որ էր 1812ին:

Նոյն տաղաւարին մէջ զետեղուած է նաև ժէրլէի պատկերը, որ նիքոլա Բ. Կայսեր թագադրութիւնը կը ներկայացնէ Մոսկուայի Վերտիսման եկեղեցւոյ մէջ: Կայսերական ընտանիքի անդամները, օտար իշխաններ և դուանագիտական մարմինն աբրուշովին ներկայացուած են հոն:

Թումուզի Տաղարարին մէջ կերևան Պիղէրգի, Սֆաքսի, Թումուզի, Կուլէգի նաւահանգիստներուն գեղչցիկ յատկաձեւերը, ինչպէս նաև Սֆաքսի և Կաֆսայի միջև երկաթուղիին յատկաձեւը: Թումուզի հանրային ուսուցման սրահը, թումուզական հնութիւնները, որոց մէջ հաւաքուած են ամենէն նշանաւոր հնագիտական բոլոր գիւտերը: Հետաքրքրալի են նաև թումուզական ճարտարաշինութեան և երկրագործութեան բաժնիները: Եւր Ա. անգաւ արտաքին գործոց նախարար Տէլբուսէ տաղաւարը կը մտնէր, Թումուզցի մը առաջ նետուելով, անոր ոտքին առջև թափեց խոշոր շիշ մը հիանալի վարդաշուր: Երբ սրահին շուրջը մասնաւոր սենեկի մը մէջ ի ցոյց դրուած են մորթեր, կաշիներ, մոզայիքներ, բրուսի արաբական նմոշներ, հին գոհարեղէններ ու գեղեցիկ կազմերով ձեռագիրներ, ինչպէս նաև Մումուզայի պէյին հիանալի գլխակը: (Շար.)

Տ.

ՀԱՐԱՄԻՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ

Պէրլինի մէջ վաճառականի մը քով գրագրութիւն ընող աղբատիկ՝ բայց պատուաւոր ընտանիքէ երիտասարդ մը ասկէց վեց ամիս առաջ հետեւեալ ազգաբարձութիւնը հրատարակել կուտայ մէկ քանի լրագրաց:

«Երիտասարդ մը որ այս միջոցիս պատուաւոր վաճառականի մը քով գրագրութեան պաշտօնը կը վարէ, կը փափաքի ամուսնանալ համեստ և գեւատի օրիորդի մը հետ, որ միայն հարիւր ֆիօրին օժիտ ունենայ»:

Հարիւր ֆիօրին... չնչին գումար մը, որուն անմիջապէս կը պատասխանեն բազմաթիւ հետամուտ օրիորդներ:

Շաբաթ մը ետքը երիտասարդը հասցէներն ին զրկող օրիորդները յատուկ նամակներով կը հրաւիրէ իր վարձած մէկ սրահը:

Ներկայք 100է աւելի էին:

Եւր ամենքը կը նստին, երիտասարդը խօսք առնելով, շնորհակալութիւն կը յայտնէ ընդհանուրին, որ պատիւ ըրած էին իր հրաւերը ընդունելով ներկայ գտնուելու. «բայց անշուշտ

կը հասկնաք, օրիորդներ, կըսէ, որ ամենքիդ հետ չեմ կրնար ամուսնանալ, դուք ամենքդ ալ այն աստիճան չնորհալի էք որ, (թէն մէջերնին սոսկալի տղեղներ ալ կային) ինձ անկարելի է ձեզմէ մէկուն առաջնութիւն տալ: Արդ, ահա-ւասիկ իմ առաջարկս, զոր ազատ էք ընդունիլ կամ մերժել. զիս իբր վիճակահանութեան առարկայ մը համարեցէք. թիւով հարիւր էք, հարիւր տոմսով վիճակահանութիւն մը կազմեցէք, մէն մի տոմս հարիւր ֆիօրինի. ձեր մէջէն ո՞վ որ չահի, ինձ հետ պիտի ամուսնանայ և վիճակահանութենէ գոյանալիք 10,000 ֆիօրինն ալ իրեն օժիտը պիտի ըլլայ:»

Ի լուր այս առաջարկին օրիորդները թէն պահ մը կը վարանին, բայց որովհետեւ երիտասարդը գեղեցիկ էր և իրենք ամուսնանալու համար եկած էին, ուստի մէկ քանին իբր օժիտ հետ բերած 100 ֆիօրինը մէջտեղի սեղանին վրայ կը դնեն. այս տեսելով միւս օրիորդներն ալ կը հետևին և ամէնքն ալ 100ական ֆիօրինը վճարելով վայրկենապէս վիճակահանութիւնը կը կազմուի:

Ամիս մը ետքը այդ հնարամիտ երիտասարդը խիստ գեղեցիկ օրիորդի մը հետ եկեղեցի կը մտնէր պսակուելու համար, շրջապատուած 100ական ֆիօրին ցնծացող օրիորդներէ. ու թէեւ կատարելապէս չիլ էր հարսնցուն, բայց այս բանը երիտասարդին աչքին չէր երեւար 10,000 հատիկ կարմրուկ ֆիօրիններու քով:

ԹԱՇԿԻՆԱԿՈՎ ԽՕՍԱԿՅՈՒԹԻԻՆ

(Անգղիական քարտէս)

«Պէտք է խոստովանիլ թէ գերազանցապէս ամօթխած ու պարկեշտամօլ Անգլիոյ մէջ, ամեն սիրային արկածախնդրութիւն ներքի է, պայմանաւ որ թաքուն, քողուած ըլլայ կեղծաւորութեան լայն թեւերուն տակ: Սէրն իսկ հոն կեղծ պարկեշտութեամբ ու մաքրակրօն ըմբռնումով պէտք է երևան գայ հրապարակաւ, բայց հոգ չէ ներքինը:

Եւ ահա՛ այս թառթիւֆականութեան արդիւնքն եղած է թաշկինակով սիրաբանութիւնը, որ սա գերազանց առաւելութիւնը ունի թէ ո՛չ որ կը նշմարէ զայն, բացի սիրաբանողէն, և նոյն իսկ այս վերջինն ալ «կը սիրեմ քեզ» կը լսէ, առանց լսած ըլլալ ձեւացնելու ու ժամադրութիւն կուտայ առանց չիկնելու: Իրաւ է թէ դժնիկը, եղբւրանին, մանիշակը, գարնանածաղիկը պերճախօս միջոց մը կրնան ըլլալ սիրաբանութեան,

բայց գոյախտաբար մարդ ամէն ատեն ծաղիկ-փունջ չի կրեր և ո՛չ ալ ծաղիկներու ածու մը՝ զրպանին մէջ: Սակայն թաշկինակ մը միշտ կունենայ քովը և թէ անիկա ալ պակսի, լրագիր մը կամ թուղթի կտոր մը անոր գործը կը տեսնէ:

Թաշկինակով սիրաբանութիւնը շատ պարզ է. ամենէն տխմարներն իսկ առաջին անգամէն կրնան ըմբռնել: Շատ գիւրին է թաշկինակով իղձերդ արտայայտել համակրած մէկ անձիդ կամ գոյախտաբար թիւնդ յայտնել քեզի անհաճոյ եղած մէկու մը:

Թաշկինակի այս խաղը շատ տարածուած է Անգլիոյ մէջ: Հնակարկատին, ինչպէս նաեւ աղնուականին աղջիկը անոր գաղտնիքը դիտէ: Դրպէն յաճախող աղջկան կը զայն կը փորձէ սրահին մէջ և գիւտաւոր սպասուհին զայն կը կրկնէ խոհանոցին մէջ:

Չկայ աղջկան մը, որ իր քերականութենէն աւելի աղէկ չգիտնայ սիրոյ այս քերականը, որուն միջոցաւ իր մօրաքրոջ տղուն շատ դիւրաւ կրնայ ըսել. «Այս իրիկուն քեզի կը սպասեմ» և միևնոյն ատեն՝ իր ճակատը կը կարկառէ մօրը համբոյրին:

Ահա թաշկինակի խաղին նշանները և իրենց նշանակութիւնները. որոնք բաւական հետաքրքրաշարժ են:

1. Թաշկինակը շրթնակներուն վրայէն անցնել. — Յարաբերութեան մոնելու փափաք (սակայն այս փափաքը ո և է խոստումի համարժէք չէ բնաւ):

2. Թաշկինակը աչքերուն վրայ անցնել. — Տըխուր եմ, եթէ գիտնայիք թէ որքան կը ձանձրանամ մայրիկին քով: Եթէ կարենայիք մտախոհութիւնս ցրուել:

3. Մէջ տեղէն առնել զայն. — Օհ, պարոն, շատ արագ կընթանաք: Կամայ հանդարտեցէք քեզ մը:

4. Գետին ձգել զայն. — Կարծեմ թէ կը համաւայնինք իրարու հետ:

5. Ձեռներուն մէջ դարձնել զայն. — Անտարբեր եմ ձեզի նկատմամբ:

6. Այսին վրայէն անցնել զայն. — Կը սիրեմ ձեզ:

7. Ձեռներուն վրայէն անցնել զայն. — Կարհամարհեմ ձեզ:

8. Պահ մը աջ աջսին վրայ թողալ զայն. — Այո՛:

9. Չախ աջսին վրայ թողալ զայն. — Ո՛չ:

10. Չախ ձեռքին մէջ դարձնել զայն. — Կը տաղտկացնէք զիս: Կը փափագիմ օձիքս ազատել ձենէ:

11. Այժմ ձեռքի մեջ դարձնել զայն. — Ի զուր
ժամանակ կը կոչուցնէք: Ուրիշ մը կը ուրեմ:

12. Մաղել զայն. — Կուգեմ հետերնիդ խո-
սիլ:

13. Այժմ ուսին վրայ նետել զայն. — Հետեցէք
ինծի: Բանէ մը մի՛ վախնաք, կրնաք համարձա-
կօրէն մօտեցալ ինծի:

14. Ձախ ուսին վրայ նետել զայն. — Մի՛ հե-
տեիք ինծի կամ դադրեցէք հետեցիլ:

15. Թաշկինակի հակադիր անկիւնները երկու
մեկերուն մէջ առնել. — Սպասեցէք ինծի:

16. Ճակցին վրայէն անցնել զայն. — Ուշադ-
րութիւն ըրէ՛ք, կը հսկեն մեր վրայ: Ակնոցա-
ւոր մօրաբորոյս գլուխը դիտեցէք պահ մը:

17. Այժմ ակնցին վրայ դնել զայն. — Ի՞նչ ու-
նիք, բան մը եղեր էք այսօր, առջինը չէք: Ձար-
մանալի կերպարանք մը առած էք:

18. Ձախ ակնցին վրայ դնել զայն. — Տոմ-
սակ մը պիտի չրկեմ ձեզ: Պատրաստուեցէք:

19. Պահ մը աշխարհ վրայ թողալ թաշկինակ-
կը. — Օ՛հ, չար դուն ալ, օ՛րքսն անգութ ես,
օ՛ն անդր անպիտան:

20. Յոցանսին շուրջը թառալել զայն. — Շատ
ուշ է, բարեկամս. խօսք տուած եմ ուրիշի:

21. Մասնեւսին շուրջը փաթել. — Ամուս-
նացած եմ:

Ինչպէս կը տեսնուի, վերի ցուցակին մէջ ա-
մէն պարագայ նախատեսուած է: Սիրահարները
կրնան իրարու ըսել այն ամէն բաները, որ սի-
րահանութեան սկզբնաւորութենէն մինչև վախ-
ճանը կըսուի սովորաբար:

Բերանը համր է, նայուածքն անողորմ կամ
այլուր ուղղուած, թաշկինակը միայն կերերայ,
կը խօսի, կը բացատրէ, կը խնդրէ, կընդունի
կամ կը մերժէ: Բան մը չէ ըսուած, ոչ ոք բան
մը նշմարած է և ինչ որ ամենէն հիանալին է,
ամօթխածութիւնը փրկուած ու գործը ի գլուխ
եղած է: Ասիկա սիրաբանութեան արուեստին
լրուփն է. այնպէս չէ՛:

Զ. Ն.



ՊԻՍՏԻՅԵՐ

Անգլիական առաջնակարգ բազմա-
տեսակ պիւսքիւյիներ այս անգամ
սկսան ծախուիլ Մոսկովա Տ. Ագ-
րի Կիւմիւշճեանի նպարավաճառա-

տունը: Թէ՛ ապրանքազնուութիւնը եւ թէ՛ գի-
նորու չափաւորութիւնը ստուգելու համար այցե-
լութիւն մը բաւական է:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ (Աժանս Բոժոժիկ եւ Ընկ)

Մարիճա դետ

Թուարանութեան դասատուին իշմարաբա-
նական խօսակցութեանց առաջը առնելու հա-
մար տնտես արքարը մտադիր է դասարանին
նոյն պատուհանին առջև իբր վարագոյր խոշոր
աշխարհացոյց տախտակ մը կախել:

Գամշաթքա

Ժամկոչը՝ տիկիններու կողմէ եղած հարց-
ման մը պատասխանելով ըսաւ որ, «երբ եկեղեց-
ւոյ զանգակը 1-2 ժամ ծանրծանք կը զարնուի
նշան է թէ մեռնողը տեղացի է. իսկ երբ 1-2
վայրկեան խաթիւն ֆէոյիւ անէջնով զարնուի,
մեռնողը դաղթական մը եղած կըլլայ»:

Ուլիցա Բօթբօթ

Մասնաւոր վարժարանի մը ուսուցչական
մարմինը որ բաւական ամիսներէ ի վեր դրա-
մական ծովապահութեան դատապարտուած է,
հարահատեալ փափաք յայտնեց երթալ Մագսուտ
աղայի քիշի ֆապրիգան աշխատելու, որպէս զի
դոնէ չաբաթը քանի մը ֆրանքի երես տեսնէ:
Ասոր վրայ վարժարանին անօրէնը բարկացած՝
կճուր տեսակէն նետեց գեղին ըսկարբին մըն ալ
ապսպրեց:

Գամշի պոյու

Մեր ուսուցիչները ամեն գիշեր 2-3 ժամ
իսկ կիրալի օրերը առտուընէ մինչև իրիկուն
ճօղկաքիին պարտէզը նարտ կը խաղան: Խմե-
լիք օղիներուն համար: Կըսուի թէ այս դրու-
թիւնը Ֆրօպէլեան է:

Վարժարան

Աշակերտները որոշեցին թաշկինակներին
շափանդայով թրջել, որպէս զի առտունները դա-
սարան մտնող փորը մենծ Տ. վարժապետին բեր-
նէն եկած Քրիստին անտանելի հոտին գոնէ քիչ
մը առաջըը առնեն:

Բարձրագոյն կարգի չարածճի աշակերտներէն
մէկն ալ վարժապետին մեկնեցէն հոգը՝ սրահին
միջնուորտը մաքրելու համար յաջողեցաւ թի-
թեղի կոորի մը վրայ երկու կրակ բերելով, ա-
սա-ջայի քիւրսիսի տալ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Բ. Կ. ՊՕՆՃՈՒԲԵԱՆԻ

Գ. Հասոք Նոր Ընթերցարանը

Ա. տարի գին 60 սանգիմ. Բ. տարի գին 1 ֆր.
Գ. տարի գին 1 ֆրանք. Դիմել յօրինողին սահա-
յէով, Զ. Կ. Պոնճուբեան Աստու

Քսան օրինակ գնողին համար 15 0 | 0 ղեղը:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ

Печатница „Взаимность“ — Варна.